

Առաքելության նկարագիր

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը (ՀԾԾ) (պաշտոնական անվանումը «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ) շահույթ չհետապնդող կազմակերպությունն է՝ տեղակայված Ուոթերթաուն և Երևան քաղաքներում: Այն իրականացնում է կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր՝ Հայաստանի աղքատ և անտառագուրկ գոտիներում և հայցում է ձեր աջակցությունը:

1994թ-ից ՀԾԾ-ը հսկայական աշխատանք է իրականացրել անապատացման դեմ պայքարում՝ գործելով կենսաբազմազան, սակայն առավել վտանգված Կովկասյան տարածաշրջանում: Ծրագրի շրջանակներում տնկվել և վերականգնվել են միլիոնավոր ծառեր և ստեղծվել են բազմաթիվ աշխատատեղեր:

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը գումարներ է հայթայթում անտառների վերականգնման նպատակով՝ ջանալով նպաստել Հայստանի տնտեսական և սոցիալական զարգացմանը: Մեր կողմից աճեցված և տնկված ծառերը կենսական նշանակություն ունեն. նրանք մարդկանց ապահովում են սնունդով, փայտով, բնապահպանական բարիքներով և տնտեսության աճի համար անհրաժեշտ հնարավորություններով:

Մեր նպատակն է օգնել հայ ժողովրդին ծառերի օգտագործման միջոցով բարելավել իր կենսամակարդակը, ինչպես նաև պահպանել շրջակա միջավայրը: Այդ առաքելությունն իրականացնելիս մենք առաջնորդվում ենք հետևյալ խնդիրներով. աջակցել մարդկանց և, առաջին հերթին, չքավորներին հոգալու իրենց կարիքները, ինչպես նաև պահպանել բնական էկոհամակարգը:

ՀԾԾ-ի երեք խոշոր ծրագրերն են՝

1. ծառերի տնկում քաղաքային և գյուղական վայրերում
2. բնապահպանական կրթություն
3. կայուն զարգացում և աղքատության կրճատում

ՀԾԾ-ը ունի մոտ 60 աշխատակից: Երևանյան մասնաճյուղը ապահովված է երեք ժամանակակից տնկարաններով և բնապահպանական կրթության համար նախատեսված կենտրոնով: Երևանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղի բնակչության հետ՝ ծառերի համար միկրո ձեռնարկությունների(տնամերձ տնկարաններ) ստեղծման միջոցով, հիմնում է կանաչ գոտիներ հանրային օգտագործման համար, անտառապատման միջոցով վերականգնում է էռոզացված անտառային հողերը: Նոր անտառներ տնկելու նպատակով հիմնադրամը ժամանակավոր աշխատատեղեր է ստեղծում հարյուրավոր մարդկանց համար: